ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դեզսերվիս ՍՊԸ-ն ՄԲԿ-ԷԱԱՊՁԲ 2026-21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
15	Էնզիմեքս L9	Franklab (Sterifrance)	ENZYMEX L9	FRANKLAB (STERIFRANCE)	ԷՆԶԻՄԵՔՍ L9 1լ- Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար: Բաղադրությունը- իրենից ներկայացնում է կանաչ գույնի, բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլ դիմեթիլ ամոնիումի քլորիդ

						(ՉԱՄ), ֆերմենտների համալիր (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրամասեր՝ ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), ներկանյութ, բուրանյութ, ջուր և այլն: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս , քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ `գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ

						արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը մինչև 5-30 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով), ինչպես նաև օժտված լինի ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 10 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 7,8-8,8: Վերջնական

					օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ, պետք է երաշխավորված լինի կամ Storz, կամ Olympus, կամ Fujinon, կամ Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ДЕЗСЕРВИС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄԲՉ-ԷԱԱՊՁԲ 2026-21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
15	Энзимекс L9	Franklab (Sterifrance)	ENZYMEX L9	FRANKLAB (STERIFRANCE)	Энзимекс L9 пласт. тара с дозатором 1л